Հավելված N 4
ՀՀ կառավարության 2025 թվականի
նոյեմբերի 27-ի N 1710-Ն որոշման

Կ Ա Ր Գ

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՕՊԵՐԱՏՈՐԻՑ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂԻՑ ՊԱՐՏԱՊԱՆԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Հարկադիր կատարողը «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով նախատեսված օպերատորից կամ ծառայություններ մատուցողից ստանում է պարտապանի կոնտակտային տվյալներ պարտապանի հետ հաղորդակցության և այդ միջոցով նաև վերջինիս գույքի կազմը պարզելու նպատակով:

2. Հարկադիր կատարողը 1-ին կետում նշված տեղեկատվությունը ստանալու համար կատարում է հարցում՝ տեղեկատվական համակարգում մուտքագրելով հետևյալ տվյալները՝

1) անուն, ազգանուն, հայրանուն.

2) անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, հանրային ծառայությունների համարանիշ (առկայության դեպքում):

3. Կատարված հարցմանն ի պատասխան՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը տեղեկատվական համակարգի միջոցով ստանում է պարտապանի կոնտակտային տվյալները՝ հեռախոսի համար և առկայության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ